Ներկայացուցչական ժողովրդավարության արդի հարցերը Հայաստանում

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ
ԹՈՄ ՍԱՄՈՒԵԼՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆ

Խորհրդարան. խորհրդակցության վայր

- Սահմանադրական արդի համակարգ
- Ընդհանուր բարօրության գերխնդիրը
  - Անվտանգություն
  - Ցանկալի այլ բարիքներ
- Ներկայացուցչականություն և աշխատանքի բաշխում
- Մեր հավաքական կյանքի ճակատագիրը
  - Մեզ չվնասելու հրամայական

Պետք է սկսեմ արդի իրավական համակարգերի երևի բոլորին ծանոթ և ընդունելի սկզբունքներից:

Սահմանադրությամբ սահմանվում են իրավունքներ և պարտավորություններ մեր ընդհանուր բարօրության համար, որը ներառում է և՛ անհրաժեշտ անվտանգություն, և՛ ցանկալի այլ բարիքներ:

Քաղաքացիները, որպես հանրության մասնիկներ, երկրի համատեղ տեր լինելով, ունեն գերխնդիր՝ ճիշտ որոշումներ կայացնել և իրականացնել:

Քանի որ միլիոնավոր մարդկանց քննարկումների եւ միասնական ջանքերի միջոցով այդ որոշումների կայացնելը անգործադրելի է, արդի աշխահրում դա կազմակերպվում է ներկայացուցչական և աշխատանքի բաշխման սկզբունքների հիման վրա:

Այս նպատակով քաղաքացիները ժամանակավորապես լիզազորում են պաշտոնյաների եւ պաշտոնական մարմինների՝ նրանց վստահելով մի շատ լուրջ եւ ծանր պարտավորություն՝ այսինքն, մեր հավաքական կյանքի ճակատագիրը:

Սահմանադրությամբ դրվում է ամենակարևոր սահմանը՝ մեզ չվնասելը:

Դա այն չգրված հասարական պայմանագիրն է, որի համար ղեկավարները պատասխանատու են:

Դա նշականում է ոչ միայն օրենքների տառը կատարել, այլ դրանց ոգին կյանքի կոչել ժողովրդի անհրաժեշտ և ցանկալի բարիքները ապահովելու համար:

Ղեկավար եւ հասարակություն

- Ղեկավար – նավապետ
- Ազատություն եւ հարգանք
- Ներկայացուցչության անհրաժեշտություն
  - բոլորին լսելի դարձնելու համար
  - բոլորին հարգելու համար

Այսքանը երևի տարրական գաղափարներ են, և արդի աշխարհում գրեթե ամեն տեղ ընդունված են:

Երկու դիտարկում վերոնշյալի մասին:

1. Ղեկավարելը նման է նավապետ լինելուն, որի ճիշտ աշխատանքից է կախված, իր, իր ուղեւորների, իր անձնակազմի եւ նավի ճակատագիրը՝ այսինքն յուրաքանչյուր արարք կատարելիս հոգատար և հաշվետու լինել այս բոլորի համար:
2. Մարդիկ հանգիստ և պաշտպանված են զգում, երբ իրենց անձը, արժեքները, կարծիքը ու խնդիրները հարգում են:

Այս երկուսը ապահովելու համար, համակարգը պետք է ունակ, պատասխանատու և ներկայացուցչական լինի, որպեսզի յուրաքանչյուր քաղաքացի վստահ լինի, որ ունի իմաստուն և հոգատար ղեկավարություն և բանիմաց ներկայացուցիչներ:

Ներկայացուցչություն

- Հանրային կյանքում տարաձայնությունները բնական են և անխուսափելի:
- «Ազգային ժողովը ժողովրդի ներկայացուցչական մարմինն է:» հոդ. 88

Քանի որ ցանկացած հասարակությունում կան տարբեր խնդիրներ ունեցող և տարբեր պատկերացումներ ունեցող մարդիկ, անհրաժեշտ է լսել և հնարավորինս բոլորի համար ընդունելի որոշումներ կայացնել, հաշվի առնելով ընդհանուր բարօրությունը և անհատական իրավունքները:

Սրա իրագործումը իշխանության բոլոր ճյուղերի պարտականությունն է, հատկապես խորդհրդարանինը, որը Սահմանադրությունը սահմանում է հետևյալ կերպ՝

Ազգային ժողովը ժողովրդի ներկայացուցչական մարմինն է: (հոդ. 88)

Խորհրդակցություն ու ներկայացուցչություն

- Հանրային կյանքում տարաձայնությունները բնական են և անխուսափելի:
- Government հունարեն, cyber – «նավի ղեկ», որը հայերեն *ղեկավարելու* բուն իմաստն է:
- Խորհրդակցելու անհրաժեշտությունը
- Ներկայացուցչական ժողովրդականության կարևորությունը
- Ճշմարիտը և բարին պայմանավորված չեն համախոհների քանակով
- Ճիշտ աշխատող համակարգում՝ խնդիրները պետք է լուծվեն խորհրդարանում, ոչ թե փողոցում

Հանրային կյանքում տարաձայնությունները բնական են և անխուսափելի:

Այդ խնդիրների հարթման հարթակը խորհրդարանն է: Սակայն, որպեսզի խորհրդարանը այդ գործառույթը կատարի, պետք է իրոք ներկայացուցչական լինի, ներկայացնի բոլորի ձայնը, այլ ոչ միայն ընտրություններում հաղթողներինը եւ մասնակցողներինը: Վերադառնալով նավապետի կերպարին, նավավարության մեջ չկա հաղթող կամ պարտվող: Եթե նավը վնասվեց կամ խորտակվեց, բոլորն են տուժում: Նավում գտնվողները անխտիր նույն վիճակում են: Թերևս դրա համար հին հույներից բառ ենք վերցրել Government անվանելով մեր հավաքական կյանքը դասավորող կառույց: Հունարեն cyber – «նավի ղեկ», որը հայերեն ղեկավարելու բուն իմաստն է:

Մեր առօրյա կյանքում, կարևոր խնդիրներ լուծելիս, հատկապես մեր և ուրիշների ճակատագրին վերաբերող հարցերը, որոշումները մենակ չենք կայացնում:

Խորհրդակցում ենք. խորհրդակցում ենք տարբեր մարդանց հետ, այլ կարծիքներ ենք լսում:

Մանավանդ պարտավոր ենք խորհրդակցել նրանց հետ, ում համար կայացվելիք որոշումը կարող է ունենալ էական հետևանքներ:

Դրա համար, Սուրբ Գրքից եւ հին հույներից սկսած, խրատում են որոշումները խորհրդակցության միջոցով կայացնել: Զարմանալի չէ, որ առաջին բառերը, որ գրվեցին հայոց այբուբենով, հենց այդ մասին էին:

Միայնակ որոշումներ կայացնելիս բացթողումների վտանգը մեծ է: Մի քանի հոգու դեպքում նույնպես կարող ենք սխալվել, մանավանդ եթե միայն համախոհների հետ ենք խորհրդակցում :

Շատերը, նույնիսկ բոլորը, նույնպես կարող են, իհարկե սխալվել: Ճշմարիտը և բարին այնպիսի արժեքներ են, որոնք համախոհների քանակով չեն պայմանավորված: Համենայն դեպս ինչքան կարծիքներ լսենք և հաշվի առնենք, այնքան թերացումներից զերծ կարող ենք մնալ:

Հանրային կյանքում այս խորհրդակցության համար նախատեսված է խորհրդարանը:

Դրա համար ներկայացուցչական ժողովրդավարության վրա են հանգել և՛ հին փիլիսոփաները և՛ արդի աշխարհը, որպես իր թերություններով հանդերձ, սահմանադրական նախընտրելի ձև:

Դեռևս երաշխիք չկա, որ չենք սխալվի, սակայն խորհրդակցությամբ պակասում է դրա վտանգը:

Ազգային ժողովը պատասխանատու է «նավ»-ի բոլոր ուղևորների համար: Հակառակ դեպքում, չներկայացվածները ստիպված են իրենց խնդիրները տանել փողոց, որը լավագույն տեղը չի արդյունավետ, տրամաբանված լուծումներ գտնելու համար:

Սա խտրականություն է ստեղծում ներկայացվածների և չներկայացվածների միջև: Մինչդեռ խորհրդարանը հենց դրա համար է նախատեսված – ի մի բերելու տարբեր տեսակետներ ունեցող մարդկանց՝ հնարավորինս բավարարող լուծումներ որոնելու համար:

Դրա համար, սահմանադրությամբ սահմանված ներկայացուցչականությունը պետք է ապահովվի, ոչ միայն որպես բառեր թղթի վրա, այլ նաև իրականացվի խորհրդարանի ձևավորման մեջ:

Լիարժեք ներկայացուցչություն

- «լուռ հատված»-ի իրավունքները եւ ձայնը լսելի դարձնելը
- Սահմանադրության նորմն արդյո՞ք լիարժեք իրագործվում է, երբ մեծ թվով մարդիկ չեն մասնակցում ընտրություններին
- «Լուռ հատված»-ի ձայնը չպետք է ներկայացնի այն ուժը, որին իրենք չեն ընտրել

Ինչպես գիտեք, ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ աշխարհում, բոլոր ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեցողների մի զգալի հատված ինչ-ինչ պատճառներով ընտրություններին չի մասնակցում:

Ոչ բոլորին է հոգեհարազատ այս կամ այն կուսակցական գաղափարախոսությունը:

Կամ, առաջադրվածների շարքում ընտրողները չեն գտնում իրենց համար ընդունելի դեմքեր կամ ուժեր՝ երեսփոխաններ, այդ բառի բուն իմաստով:

Սակայն այս «լուռ մեծամասնությանը» պետք չէ մեղադրել անտարբերության մեջ կամ զրկել ներկայացված լինելու իրենց սահմանադրական իրավունքից: Նրանք նույնպես քաղաքացի են, և նրանց ձայնը չպետք է ներկայացվի այն ուժերի կողմից, որոնց իրենք չեն ընտրել:

Նրանց ներկայացուցչությունը պետք է ապահովվի անաչառ եւ իրենց շահերին նվիրված ներկայացուցիչների միջոցով:

Ի՞նչ տարբերակներ կան այս իրավիճակը լուծելու համար:

1. Հավատարմագրված, ոչ կուսակցական ներկայացուցիչների ինստիտուտի ստեղծում
2. Խորհրդարանում համամասնաբար բաժանել պատգամավորների տեղերը
3. Խորհրդարանում կիրառել կշռային քվեարկելու մեթոդը
4. Բազմանդամ ընտրատարածքներ

Այս տարբերակները սպառիչ չեն, բայց մտորումների հիմք են տալիս և նպատակաուղղված են առկա համակարգի բացահայտված խնդիրների լուծմանը:

1. Հավատարմագրված ներկայացուցիչների Ինստիտուտը

Հավատարմագրված ներկայացուցիչները պետք է լինեն հանրային խնդիրներին հմուտ, օրենք և քաղաքականություն մշակողներ տարբեր ոլորտներից, որոնք ստանձնում են անաչառ ներկայացուցչի պարտավորությունը, միշտ աշխատելով թափանցիկ և հաշվետու ժողովրդի առջև:

Այս բոլորն ապահովելու համար իհարկե պետք է մշակվի համակարգ, օրինակի համար՝

i. թեկնածուների պատրաստության ստուգում
   - Բոլոր էական պաշտոնների համար նման չափանիշներ սահմանել՝ փորձ, գիտելիք, էթիկա
   - ընթացիկ աշխատանքի վերահսկում
ii. թափանցիկ, խորհրդակցային որոշումների կայացում՝ քաղաքացիների կարծիքը հարցնելով և հաշվի առնելով
iii. հետկանչման մեխանիզմ
iv. Ծառայության ժամկետների սահմանում, հերթափոխության սկզբունքով

i. ՀՆ թեկնածուների պատրաստության ստուգում

- Հավատարմագրված ներկայացուցիչների թեկնածության չափանիշներ սահմանել՝ օրինակ
  - Փորձ, գիտելիք, էթիկա, ոլորտային /մասնագիտական
  - Անաչառությունը, նվիրվածությունը, պատրաստակամությունը ստանձնել և կատարել պարտավորությունները
  - ՀՆ-երի առկայությունը հիշեցնում է, որ ամբողջ հանրության համար պետք է մտածել և աշխատել
  - Բնակչության բազմազանության ներկայացուցչություն ապահովել որակյալ ներկայացուցիչներով՝ սեռային, տարիքային, քաղաք-շրջան, կրոն, ազգ, սփյուռք, և այլն.
  - Ընթացիկ աշխատանքի գնահատում
  - Ցանկալի է նման չափանիշներ սահմանել կառավարման բոլոր առանցքային պաշտոնների համար

i. Թեկնածուների պատրաստվածության ստուգում

Հավատարմագրված ներկայացուցիչները պետք է լինեն պատրաստված, ունակ, նվիրված իրենց ճիշտ պարտավորությունները կատարելուն: Օրենդրությունը և քաղաքականությունը երբեք կատարյալ չեն: Պետք է մշակվեն, բարեփոխվեն և գնահատվեն ըստ իրավիճակի և արդյունքների: Այս գործառույթը կատարելու համար պահանջվում է փորձ, գիտելիք, նվիրում, էթիկա: Բարեբախտաբար՝ այդպիսի ունակ և պատրաստված մարդիկ բավականին շատ են մեր մեջ, սակայն նրանք ներգրավված չեն հանրային որոշումների կայացման մեջ ինչ-ինչ պատճառներով: Այս ինստիտուտը հնարավորություն կտա այդ ունակ, պատրաստված, փորձ ունեցող, և հանրային բարօրությանը նվիրված մարդկանց ներգրավվելու համար, մարդիկ, որոնք անաչառ կծառայեն հանրությանը, միաժամանակ ներկայացնելով մինչ այդ Խորհրդարանում չներկայացված քաղաքացիներին: Նաև իրենց առկայությունը խորհրդարանում բոլորին կհիշեցնի, որ խորհրդարանը և կառավարությունը պետք է մտածեն և աշխատեն ամբողջ հասարակության համար, այլ ոչ միայն «հաղթողների» կամ լոկ «մեծամասնության» շահի համար:

Ցանկալի է նման չափանիշներ սահմանել նաև կառավարման բոլոր օղակների առանցքային պաշտոնների համար:

Այդ պաշտոնների թեկնածուները պետք է համապատասխանեն նախօրոք հաստատված չափանիշներին՝ փորձը, գիտելիքը, էթիկան, կառույցի աշխատանքի մասշտաբը, մի խոսքով համապատասխանումը և պատրաստվածությունը ստանձնելիք պաշտոնին:

Փորձը կարող է ձեռք բերված լինել կա՛մ հանրային, կա՛մ համադրելի մասնավոր աշխատանքով:

ii. Թափանցիկ, խորհրդակցային որոշումների կայացում

- Որոշում կայացնելուց առաջ, ներկայացվածների հետ խորհրդակցելու պարտավորություն:
- Որոշումների ընդունումը հրապարակային կարգով իրականացնելը, ընդունվող որոշումների հիմնավորման կանխավ հրապարակայնացումը:
- Որոշումների կայացման իմաստալից, պատշաճ ընթացակարգ՝ քաղաքացիների համար կարծիք հայտնելու իրավունքի ապահովում: Այդ կարծիքները քննարկելու և դրանց պատասխանելու պարտավորություն:
- Ընտրողների հետ պարբերաբար հանդիպումների կայացում:

ii. Թափանցիկ, խորհրդակցային որոշումների կայացում՝ քաղաքացիների կարծիքը հարցնելով և հաշվի առնելով

Հավատարմագրային ներկայացուցիչները պարտավոր են ընտրողների հետ խորհրդակցելով, հստակեցնել խնդիրները, ցանկացած որոշման դեպքում կողմնորոշվելուց առաջ: Դա պետք է լինի թափանցիկ, գրավոր, հանրությանը մատչելի, մասնակցային համացանցային հարթակով: Քաղաքացիների մտահոգություններին պետք է հանրային, գրավոր հարթակում պատասխան ստանան, ապահովելով որոշումների տրամաբանվածությունը, թափանցիկությունը, հաշվետվությունը և վստահությունը:

iii. Հետկանչում և iv. Ժամկետներ

- Բացի տարեկան աշխատանքի գնահատումից, տվյալ ընտրատարածքի քաղաքացիները կարող են «հետկանչել» ՀՆ-ին, և նորը կնշանակվի դրա փոխարեն
- 5 տարի առավելագույն ծառայության ժամկետ
- Հերթափոխ-ժամկետներ – 1/5 փոխվում է ամեն տարի, նորը նշանակվում թեկնածուների շարքից

i. Հետկանչման մեխանիզմ – բացի ընդունված տարեկան աշխատանքի գնահատումից, ներկայացված քաղաքացիների դիմումի հիման վրա հավատարմագրային ներկայացուցիչները կարող են «հետ կանչվել»: Ներկայացուցիչների գործունեությունը ենթակա է մանրամասն քննարկման: Հետ կանչվածը այլևս չի կարող լինել հավատարմագրային ներկայացուցիչ:

ii. Ծառայության ժամկետների սահմանում՝

- եթե խորհրդարանական ընտրությունները ամեն 5 տարին մեկ են, ապա հավատարմագրային ներկացուցիչները բաժանվում են 5 մոտավորապես հավասար խմբերի, 1/5-ը փոխվում է ամեն տարի, նույն պատահականության ընտրության սկզբունքով, նույն ընդհանուր «հավատարմագրային ստուգումն» անցած թեկնածուներից:
- ծառայության ժամկետներ – հավատարմագրային ներկայացուցիչը չի կարող լինել խորհրդարանում ավելի քան 5 տարի ընդհանուր ծառայության ժամկետից ավել: Օր. 1 անգամ ծառայեց 2 տարի, մնում է թեկնածուների շարքում, և եթե կրկին ընտրվեց կարող է ծառայի ևս 3 տարի:

Ի՞նչ տարբերակներ կան այս իրավիճակը լուծելու համար:

1. Հավատարմագրված, ոչ կուսակցական ներկայացուցիչների ինստիտուտի ստեղծում
2. Խորհրդարանում համամասնաբար բաժանել պատգամավորների տեղերը
3. Խորհրդարանում կիրառել կշռային քվեարկելու մեթոդը
4. Բազմանդամ ընտրատարածքներ

2. Խորհրդարանում տեղերի Համամասնական բաշխում

- Բաշխել տեղերը, որպեսզի արտացոլվի ընտրողների իրական տրված ձայները. Օրինակ՝ ենթադրենք խորհրդարանը ունի 100 տեղ
- Եթե ընտրողների 60% մասնակցեցին ընտրություններին և իրենց ընտրած թեկնածուները նվազագույն շեմն անցան և ընտրվեցին, իրենց ընտրած պատգամավորները պետք է ունենան խորհրարանում 60 տեղ: Իսկ խորհրդարանի մնացած 40 տեղերը պետք է ներկայացնեն ընտրողների մնացած 40%-ին.
- Այս մնացածը համալրվում է նախօրոք հավատարմագրված ներկայացուցիչների շարքերից՝
  - Պատահականության ընտրությամբ
  - Համապատասխան փորձ, գիտելիք, նվիրում, էթիկա ունեցող մասնագետներ
  - Արտացոլում են բնակչության բազմազանությունը, տարիքային, սեռային, մասնագիտական, կրոն, ազգ, սփյուռք և այլն.

2. Խորհրդարանում համամասնաբար բաժանել պատգամավորների տեղերը

Դիտարկենք օրինակ՝ դիցուք ունենք 2.5 մլն ընտրող, որոնց համար պետք է ձևավորվի 100 տեղ ունեցող խորհրդարան, մոտավորապես 25,000 ձայնի համար 1 ներկայացուցիչ սկզբունքով: Ընտրություններին մասնակցում են ընտրողների 60 տոկոսը, և 100 տեղից 60-ը բաշխվում է տվյալ ընտրություններում որոշակի շեմ հաղթահարած կուսակցությունների ներկայացուցիչների մեջ:

Մնացած 40 տոկոսի համար նախօրոք հավատարմագրված, ոչ կուսակցական ներկայացուցիչների շարքից պատահականության սկզբունքով ընտրվում են 40 ներկայացուցիչ, որոնք համալրում են խորհրդարանի ազատ մնացած 40 տեղերը:

Այս 40 հավատարմագրային ներկայացուցիչները ներկայացնում են և՛ ընտրություններին չմասնակցողներին և՛ նրանց, ովքեր իրենց քվեն տվել են ընտրական շեմը չանցած թեկնածուներին:

Ի՞նչ տարբերակներ կան այս իրավիճակը լուծելու համար:

1. Հավատարմագրված, ոչ կուսակցական ներկայացուցիչների ինստիտուտի ստեղծում
2. Խորհրդարանում համամասնաբար բաժանել պատգամավորների տեղերը
3. Խորհրդարանում կիրառել կշռային քվեարկելու մեթոդը
4. Բազմանդամ ընտրատարածքներ

3. Խորհրդարանում կիրառել կշռային քվեարկելու մեթոդը

- Ներկայացուցչությունը և իրավահավասարությունը ապահովելու համար, օր. Ենթադրենք ունենք 2,5 մլն. ընտրողներ, 100 տեղ ունեցող խորհրդարանում, 1 պատգամավոր միջինը 25,000 ընտրողների ձայն է ներկայացնում:
- Ուրեմն, 75000 ձայն ստացողը, ներկայացնում է 3 անգամ ավելի ընտրող-քաղաքացիներին, քան 25,000-ով անցնողը, և իրավահավասար չէ, եթե երկուսն էլ ունենան խորհրդարանում մեկական ձայն
- 75000 ձայն ներկայացնողը 3 քվե խորհրդարանում, իսկ 25000 ձայն ներկայացնողը 1 քվե
- Սա ինքնաբերաբար բերում է համամասնական ներկայացուցչության՝ առանց կուսակցական ցանկերի
- Ճշգրտության համար, կոտորակներ կարելի է օգտագործել, որ հնարավորինս արտացոլվի ընտրողների իրական ձայները
- Կշռային քվեարկության մեթոդը լայն կիրառում ունի միջազգային ներկայացուցչական կազմակերպություններում՝ բոլորի ձայնը լսելի դարձնելու համար, նույն ժամանակ հարգելով ներկայացվածների իրավահավասարությունը:

Խորհրդարանում կիրառել կշռային քվեարկելու մեթոդը

Ներկայացուցչությունը և իրավահավասարությունը ապահովելու համար, խորհրդարանում կարելի է կիրառել կշռային քվեարկելու մեթոդը: Յուրաքանչյուր պատգամավորի քվե խորհրդարանում կարտացոլի ընտրություններում ստացած ձայները: Շարունակելով վերոհիշյալ օրինակը՝ 100 տեղ ունեցող խորհրդարանում, պատգամավորը 25,000 ընտրողների ձայն է ներկայացնում: Եթե շեմը անցնող թեկնածուն ստանում է 75000 ձայն, նա ներկայացնում է 3 անգամ ավելի ընտրող-քաղաքացիներ, քան 25,000-ով անցնողը, ուրեմն, քաղաքացիների իրավահավասարությունը չխախտելու համար, որոշումների մեջ պետք է ունենա համամասնաբար ավելի մեծ ձայն, այս օրինակում 3 քվե, իսկ մինչ 25000 ձայն ստացող թեկնածուն կունենա 1 քվե:

Ճշգրտության համար, կոտորակներ էլ կարելի օգտագործել, որպեսզի ոչ մի ընտրողի ձայն չանտեսվի: Յուրաքանչյուր հավատարմագրային ներկայացուցիչ միայն 1 քվե կունենա քանի որ նա ներկայացուցնում է 25,000 ընտրող:

Կշռային քվեարկության մեթոդը լայն կիրառում ունի միջազգային ներկայացուցչական կազմակերպություններում՝ բոլորի ձայնը լսելի դարձնելու համար, միևնույն ժամանակ հարգելով ներկայացվածների իրավահավասարությունը:

Ի՞նչ տարբերակներ կան այս իրավիճակը լուծելու համար:

1. Հավատարմագրված, ոչ կուսակցական ներկայացուցիչների ինստիտուտի ստեղծում
2. Խորհրդարանում համամասնաբար բաժանել պատգամավորների տեղերը
3. Խորհրդարանում կիրառել կշռային քվեակրելու մեթոդը
4. Բազմանդամ ընտրատարածքներ

4. Բազմանդամ ընտրատարածքներ

- **Ինչո՞ւ:** Ընդունված և փորձված այլընտրանք՝ մեծամասական «հաղթող-պարտվող» և համամասնական կուսակցության ցանկերի համակարգերի
- Թույլ է տալիս ոչ կուսակցական թեկնածուներին մասնակցել (օր. ընտրողների ստորագրությունների առաջադրանքով, որը ապահովում է թեկնածուի ավելի լայն իրավունք
- Տեսականորեն և իրական փորձից, համամասնականը բերում է բևեռացում և մանրացնում է ընտրողներին փոքր անգործունակ կուսակցությունների, և քաղաքական անկայունության
- «Բազմանդամ ընտրատարածք» համակարգում՝ ընտրողներն ավելի բավարարված են զգում, որովհետև խորհրդարանում գրեթե միշտ ներկայացվում են հենց այն կոնկրետ թեկնածուի կողմից, ում ընտրել են:
- Ինչպե՞ս: Ենթադրենք կա 2.5 մլն. ընտրող, 10 հատ 250,000 ընտրող ունեցող ընտրատածքներ, այսինք, 10 պատգամավոր յուրաքանչյուր ընտրատարածքից
- Օրինակ, ընտրատարածք Ա-ում 175,000 ընտրող մասնակցեցին, կար 8 թեկնածու, որոնցից 4-ը շեմը անցան, հավաքելով 150,000 ձայն, ուրեմն 6 ձայնը բաշխում է իրենց մեջ, յուրաքանչուրը ստացած ձայների համամասնությամբ
- Մնացած 4 տեղերը համալրվում են հավատարմագրված ներկայացուցիչներով, մեկական քվեով խորհրդարանում.

Բազմանդամ ընտրատարածքներ

Բազմանդամ ընտրատածքների համակարգեր կիրառվում են շատ երկրներում որպես այլընտրանք «հաղթող-պարտվող» մեծամասնական և կուսակցություն-համամասնական համակարգերի: Մեծամասնական համակարգերը զրկում են պարտվողին իրենց ընտրած ներկայացուցիչն ունենալուց: Համամասնական համակարգերով կուսակցության ցանկից պատահական թեկնածու է հասնում ընտրողին, որի մասին ամենայն հավանականությամբ նա չունի որևէ գաղափար, իսկ թեկնածուն, չունի որևէ կապ ներկայացված տարածքի կամ քաղաքացիների հետ: Տեսականորեն և կիրառման մեջ համամասնական համակարգերը բերում են բևեռացման և քաղաքական ուժերի մանրացման, ինչը երևում է Հայաստանում, և մի շարք այլ երկրներում, իրենց անկայուն խորհրդարանների տեսքով, որոնք ամեն մի քանի տարին մեկ պետք է ցրվեն, քանի որ չեն կարող աշխատել քաղաքական մրցակիցների բևեռացման և չհամագործակցության պատճառով: Նաև խախտված է ներկայացուցչականության իմաստը, երբ ընտրողը ներկայացված է ուրիշ կուսակցության նվիրված թեկնածուի կողմից, հավանաբար իր տարածքի կամ բնակչության հետ կապ չունեցող մի անհատի կողմից, որը գտնվել է կուսակցության ցուցակում, ոչ թափանցիկ ձևով և առանց պատրաստվածության գնահատման: Ինչպե՞ս կարող է աշխատել համակարգը: Նույն օրինակով շարունակենք, կա 2.5 մլն ընտրող, 10 հատ 250,000 ընտրողից բաղկացած ընտրատարածք, որտեղ հնարավոր է ընտրել 10-ը պատգամավոր. (Եթե հավասար չեն, ապա պարզ թվաբանությամբ կարելի է բաշխել 100 տեղերը տասը շրջանների, համամասնաբար, ապահովելով ներկայացուցչական հավասարությունը բոլոր քաղաքացիների և պատգամավորների համար):

Թեկնածուները կարող են որևէ կուսակցության պատկանեն, կամ անկախ թեկնածություն դնեն, այդ տարածքի բնակվող ընտրողների որոշ քանակությամբ ստորագրություններ հավաքելով: Թեկնածուն կարող է թեկնածությունը դնել միայն մեկ ընտրատարածքում: Ընտրությունների ժամանակ յուրաքանչյուր ընտրատարածքից համարվում են ընտրված բոլոր այն թեկնածուները, որոնք հավաքել են անցողիկ շեմից բարձր քվեներ, օրինակ գոնե 25000 ձայն, որը 1 տոկոսն է ընդհանուր ընտրողների թվից: Ենթադրենք այս տարածքից, ընտրությունների արդյունքում ստացվել է հետևյալ պատկերը (հեշտ ըմբռնման համար, կլոր թվեր ենք օգտակործում. իրականում՝ խորհրդարանում կոտորակային կշռային քվեներով կապահովի ճշգրիտ ներկայացուցչություն և իրավահավասարություն).

Ընդհանուր ընտրողների թիվը՝ 2,500,000:

Օրինակ, Ընտրատարածք Ա-ում 175,000 ընտրող մասնակցեցին, 8 թեկնածու, որոնցից 4-ը շեմը անցան, հավաքելով 150,000 ձայն, ուրեմն 6 ձայնը բաշխում է իրենց մեջ, յուրաքանչյուրը ստացած ձայների համամասնությամբ:

Մնացած 4 տեղերը համալրվում են հավատարմագրված ներկայացուցիչներով, մեկական քվեով խորհրդարանում.

Այսպիսով, խորհրդարանում ներկայացված կլինեն բոլոր ընտրողները: (Որպեսզի ավելի հեշտ լինի հետևել, օգտագործվել են կլոր թվեր: Իրական դեպքում խորհրդարանում ֆրակցիոն կշռային սկզբունքով ձայները կարող էին օգտագործվել ինչպես քաղաքացիների, այնպես էլ պատգամավորների ճշգրիտ ներկայացուցչությունն ու իրավաբանական հավասարությունը ապահովելու համար):

Ի՞նչ կարելի անել հիմա

- Որոշ առաջարկները պահանջում են օրենսդրական փոփոխություններ, թեև համահունչ են Սահմադրության և մարդու միջազգային իրավունքների նորմերին
- եթե կան պատգամավորներ, ովքեր ելնելով իրենց սահմանադրական պարտավորությունից կամավորության սկզբունքով պատրաստ են ներկայացնել չներակայացվածներին, հիմա իսկ հնարավոր է: